

որ եւ է տեղ զեաեղուին, ուր ալ գտնուի ինքը՝ թողլով ամէն բան պիտի աճապարէ զալ անոնց մօտ եւ անոնց բնակակից ըլլալ միաբանական կեանքով (Դաւր. 286) : Իրօք ալ 1613ին վերադարձաւ Մովսէս Տաթեւ եւ յարեցաւ անոնց :

Բարի համբաւը, զոր հանեցին անոնք իրենց պարկեշտ, անձնուրաց եւ աստուածապաշտ վարքով, լսուեցաւ շրջակայքն եւ հեռուները. շատեր եկան եւ յարեցան անոնց եւ «եղեն նոցա միաբանք եւ բնակիչք տեղւոյն», ոչ միայն աշխարհականներ եւ աննշան մարդիկ, ինչպէս կը գրէ Դաւրիթեցի, այլ եւ եկեղեցականներ եւ անուանի անձնաւորութիւններ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ եւ քահանաներ միաբանեցան նորակառոյց վանքին. անոնց թուին մէջ էին Մովսէս, Պօղոս Մոկացի, Ներսէս Մոկացի, Արիստակէս Շամբեցի վարդապետները, Դաւիթ եպ. Շամբոռեցի ի ցեղէ իշխանաց որ Ղարամանենց կոչեն, Կարապետ եպ. Էջմիածնեցի, Թումաս եպիսկոպոս Տաթեւի եւն :

Ինչպէս յիշեցինք վերադոյն, 1613ին կային հոն արդէն 60 միաբան անձինք :

«Սոքա երկոքին արքս, կը գրէ Դաւրիթեցի, եղեն սկիզբն Անապատիս. եւ Անապատս եղեւ մայր եւ ծնող ամենայն անապատաց եւ առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց» (254) :

Մեծ Անապատին հիմնարկութենէն քիչ յետոյ ի խնդրոյ Մելիք Հայկազնի զնաց տէր